

Նա բարոյապէս ամեն կերպ աջակցում էր և «Լումայ»-ին, որին խոստացել էր իւր մշտական աշխատակցութիւնը, «ոչ մի յուսոյ նշով ապագալի նկատմամբ, դրում էր նա ինձ իւր վերջին նամակում, մարդ սիրտունիք բան դրելու: Յամենալն դէպս յոյս ունիմ մինչև մի շաբաթ յօդուածն ուղարկելու: Նորա վերջին նամակը կրում էր իւր վերալ քաղաքալին հիւանդանոցի գրոշմը՝ ‘Städt-Krankenhausse’, յուսահատական բառերը:

Սակայն անգութ մահը, օտարութեան մէջ, հեռու իւր պաշտած հալըենի հողից, որի բարգաւաճման այնքան անձնուրացութեամբ նույիրել էր իրան, հեռու իւր տաղանդի բազմաթիւ յարգողներից, վերջ գրեց նորա վարդափլթիթ կեանքին, առաջ քան թէ նա կարող կը լինէր իւր բաղձանքներին հասնել:

Յաւիտենական հանգիստ գրականութեան ազնիւ մշակի քրտնաշան ոսկըներին:

Գիւտ քահ. Աղանձամց

Կ Բ Թ Ռ Ո Ւ Թ Վ Ի Ւ Ն ¹⁾

Կրթութեան առողջապահական ազդեցութիւնն ընդիան-
րապէս:

Այն էական յառաջադիմութիւնը, որ ձեռք է բեր-
ուել մարդկանց հասարակական կեանքի կապակցուելով,
կախանում է ժողովրդի մտաւոր ուժգին զարգացման մէջ:

1)Այս յօդուածը մի հասուած է գերմաներէն «Առողջապահութեան գրքուկ» (Gesundheitsbüchlein) գիւրամատչելի ձեռնարկից, որ 1895 թուին մշակել և հրատարակել է Գերմանիայի առողջապահութեան բարձրագուն հասաւութիւնը (Kaiserliches Gesundheitsamt) և բնագրից թարգմանուած է մեծարգոյ բժշկապետ պ. Սամսոն Մայսուրեանցի օգնութեամբ: Այս գրքուկի մնացեալ հատուածները կաշխատնք հետզհետէ տալ «Լումայի» միւս գրքերում:

ԽՄՁ.

23

Ժողովրդների մըցումը իրանց յարաբերութիւնները բարելաւելու և ապահովելու համար ստիպում է առաւել բարձրացնել ժողովրդի կրթութեան նպատակները և հոգալ, որ ամեն մի առողջ կազմուածքով երեխալ կարողանալ ձեռք բերել գիտութեան ամենաանհրաժեշտ ծանօթութիւններ։ Ուրեմն դարձոցական կրթութիւնը կեանքի խնդիր է ամեն մի կուլտուրական ազգի համար. մինչդեռ առաջ ամեն մէկը իւր երեխան մեծացնում և կըրթում էր ինչպէս ինքն էր ցանկանում, այժմ օրէնքով պարտադիր է արսծ ամենքի համար. բայց այս պարտադիր ուսումը տարածւում է միայն ժողովրդական դըպրոցների վերալ. այսինքն գոյութեան կոիւ մղելու ամենքի համար անհրաժեշտ ծանօթութիւնները ուսուցանելու վերալ. Բայց մի քանի արուեստի ճիւղեր պահանջում են աւելի լայն գիտնական նախապատրաստութիւն դպրոցում, իբրև անհրաժեշտ հիմք ապագայ գործունէ-ութեան լաջողութեան և պարտականութիւնները հասկանալու համար։ Այս պահանջներին հասնելու համար սահմանուած են բարձրագոյն ուսումնարաններ համալսարաններ, իրանց երկարամեալ դասընթացներով։ Բայց մտաւոր միակողմանի զարգացումը խանգարում է և նուազում մարմնի ֆիզիքական ոլժերի աճեցումը։ Եթէ որ ընդհանրապէս մարմնի զարգացումը լիտ է մնում, տուժում է ոչ միայն անհատը, ալլ և առհասարակ ժողովուրդը։ Սերնդից սերունդ պակասում է մարմնական ոլժը և ժողովուրդը ֆիզիքապէս և մտաւորապէս հետզիետէ վետ է գնում (degenerieren, վերօճատել) և վերջապէս ալլ ևս անկարող է լինում իւր արտաքին թըշ-նամիների դէմ մաքառել. դորա համար ծնողների և դաստիարակների, ինչպէս նաև պետութեան պարտաւորութիւնն է հոգալ աճող սերունդը խնամել և պաշտպանել վնասակար ազդեցութիւններից և որ մաքի կարևոր կրթութիւնը չվնասէ մատող մարմնի առողջապահական զարգացման։

Երեխաների մահանալը:

Մարդկալին կեանքի ոչ մի հասակ ալնքոն ենթակալ չէ վտանգների, ինչքան վաղ մանկութիւնը ինչքան

լալտնի է Գերմանական կայս. առողջ. բարձրագոյն հաս-
տատութեան, 1892 թ. գերմանական պետութեան մէջ
երեխաների մահը մինչև մէկ տարեկան հասակը հարիւ-
րին 33,9 էր, Բաւարիայում 36,6, Բերլինում մինչև
անգամ 37, և ուրիշ երկներումն էլ այս նուրբ հասա-
կում մահը նոյնպէս մեծ զոհեր է տանում: Հարիւր կեն-
դանի ծնուած երեխաներից առաջին տարուայ հասակում
վերոիշեալ թուին Գերմանիայում մեռան 22, 9, Պրու-
սիայում 21,1, Բաւարիայում 27,5 և Սաքսոնիայում
29,8, այնպէս որ բոլոր ծնուածներից միայն մօտ $\frac{3}{4}$
մասը ապրեցան մինչև ալդ ժամանակ: Երեխաների մա-
հացութեան աստիճանը տեղի և ժամանակի համեմատ
նշանաւոր փոփոխութեան է ենթարկուում: Այս նուրբ հա-
սակի մի տարուայ ընթացքում երեխաների մէջ պատա-
հած մահերի մօտ $\frac{1}{3}$ մասը հանդիպում է լուլիս և օգոս-
տոս ամիսներին և մեծ քաղաքներում աւելի, քան գիւ-
ղերում. մանաւանդ աւելի շատ են մեռնում առաջին
տարուայ ընթացքում ապօրինի ծնուածներ, հաւանորէն
այն պատճառով, որ նոքա աւելի քիչ խնամք են վայ-
ելում, քան օրինաւոր ծնողների ձեռքով մեծացած երե-
խաւք:

Երեխաների մնունդը:

Կեանքի առաջին տարում ամենից լաճախ պատահող
հիւանդութիւններն առաջ են գալիս աննպատակալար-
մար սնունդից. շատ մալրեր չեն կարող, շատերն էլ չեն
ուզում մօր կաթով սննդել, կամ առողջութեան և ապ-
քուստ հալթալթելու պատճառով, կամ, որ տարաբաղտա-
քար, աւելի լաճախ է պատահում, առանց որևէ բարո-
յական պատճառի: Միայն սակաւաթիւ ունեոր ծնողներ
հնար են ունենում ալդպիսի դէպքում մօր ծիծը մի որոշ աս-
տիճննի բաւարար կերպով փոխարինել ծծմալրով: Մեծ մա-
սը ալդ երեխաներից ստիպուած են բոլորովին հրաժարուիլ
իրանց բնական սնունդից, մարդկալին կաթից: Գլխաւոր
սնունդը ալդ դէպքում կազմում է կովի և ուրիշ կեն-
դանիների կաթը: Ալդ կաթը մարդու կաթից լետու ամե-
նից աւելի լարմարն է ալդ նպատակին, բայց պէտք է
մաքուր պահել, երեխալին տալուց առաջ ջըի հետ խառ-

նել, մէջը քիչ շաքար ածել և լաւ եփել: Անհասկացող մալբերը, ցանկալով իրանց քնքոլշ երեխաններին մաքուը կամ քիչխառնած կաթով աւելի զօրեղ սնունդ տալ, դորանով նոքա յաճախ ստիպում են ալդ տեսակ ծանր սնունդով գրգուած ստամոքսին ընդունած կերակուրը մասամբ յետ ածել կամ մինչև անգամ մարսողական գործարանները ծանր հիւանդութիւնների են ենթարկում:

Նատ երեխալը էլ մի կերպ մեծանում են, երբ նոցա կենդանու կաթի հետ փոխէփոխ կամ նորա փոխարէն տալիս են կաթնի կօնսէրվներ և ուրիշ այնպիսի սնունդներ, որոնք կաթի տեղ են բռնում (Տարրօգատ). կտրելի է նաև երեք ամսականից մեծ երեխաններին տալ լաւ եփած և մաղի մէջ անցկացրած գարու, հաճարի և ուրիշ ցորենեղէններից զինած արգանակ, ինչպէս կաթին օժանդակող սնունդ: Բայց չպէտքէ մոռանալ, որ ալդ տեսակ արգանակները երբէք կաթի սնունդը չեն տալիս: Երբ չափազանց վաղ են փորձում երեխաններին հասակաւոր մարգոց սնունդով կերակրել՝ ալդ տեսակ փորձերը գրեթէ միշտ պատժուում են մարսողութեան ծանր խանգարմունքով:

Երեխանների երկիւղալի լուծել—փսխելը կաթնալին հասակում յաճախ կաթնի պաշարը անմաքուը պահելու հետևանք է լինում: Ալդպիսով կենդանիների կաթով կամ մօր կաթին փոխարինող ալիւրեղէններով կերակրուող երեխանների մէջ մահ աւելի է պատահում, քան մօր կաթով սննդուողների մէջ:

Թեթև խմորեղէններ կարող են փոքրիկ երեխաններն առանց վնասի ուտել սովորաբար միայն առաջին տարուայ վերջին քառորդում, թոյլ եփած ձուն՝ տռաջին տարին անցնելուց յետոյ. Թեթև մսեղէնները թէպէտ և մի քանի երեխաններ սովորում են տանել արդէն երկրորդ տարուայ ընթացքում, բայց առհասարակ պէտք է տալ երկրորդ տարուայ վերջին: Նոյնպէս լաւ է մինչև ալդ ժամանակ չտալ թեթև կանաչեղէն, գետնախնձոր և միրգ: Երեխաններն այնուհետև հեշտութեամբ ընտելանում են աւելի և աւելի զօրեղ կերակրին, բայց պէտք է բոլորովին հեռու պահել նոցանից դժուարա-

մարս կամ շատ համեմած կերակուրներ և ոգելից խմիչք-ներ։ Շաքարեղեն և անուշեղեն տալլը շատ վատ սովորութիւն է, դոքա ոչ միայն վնասակար են դաստիարակութեան, բայց և խանգարում են երեխաների առողջութիւնը, առաջացնելով՝ ատամների հիւանդութիւն և կամ մարսողութեան խանգարում։

Լոգարանների մանուկների հագուստը։ Թարմ օդի անհրաժեշտութիւնը։ Նորածինների աչքի հիւանդութիւնը։ ցունը։ մանուկների աղաղակի պատճառները։

Մանուկների լաւ հոգատարութեան անհրաժեշտ պահանջը մաքրութիւնն է, Երեխաների կանոնաւոր աճ-ման համար մանուկի մարմինը պէտք է ամեն օր լողացնել, որպէս զի մազերը և խաղերը վերալ գտնուած մարմնի ծալքերը լաւ մաքրուին, ամենից աւելի անմաք-ըութեան ենթակալ տեղերը փոշիով ցանել և երբեմն էլ իւլով օծել։ Այն մանուկների մորթը, որոնք զուրկ են ալդ տեսակ խնամքից, պլոկւում է և պզուկներ է դուրս տալիս վրէն, որոնք խանգարում են մարմնի աճումը։

Ունկան մարմինը հեշտութեամբ է ենթարկելում մըսելուն. այս պատճառով լողացնում են ալնալիսի ջրի մէջ, որի բարեխառնութիւնը մօտ 34°/ է ըստ ծելսի, (27—28 Բէօմիւրի) և տալիս են նորան տաք հագուստ ու անկողին. բայց միևնոյն ժամանակ մի անմիտ երկիւղ է զրկել նոցա թարմ օդից ազատ բնութեան մէջ։ Եթէ խիստ քամի, անձրև կամ ձիւն չկալ, որոնք կարող էին պատճառ լինել մըսելուն կամ թրջուելուն, պէտք է առողջ երեխաներին ծնուելուց արդէն մի քանի շաբաթ անց ամեն օր դուրս տանել մաքուր օդի մէջ։

Առանձին ուշք պէտք է դարձնել նորածինների աչքերի վերալ. աչքի այն վտանգաւոր հիւանդութիւնը, որ դժբաղտաբար երբեմն պատճառ է լինում փոքր մանուկների կուրութեան, ժամանակին խնամելով գրեթէ միշտ կարելի է լինում բժշկել. ուստի երբ որ հէնց աչքերի կարմը բութիւնը, կպած կոպեքերը և կամ աչքերի անկիւնների ճպուռը արտալատում են, որ բորբոքումն

սկսում է, ել չպէտք է ուշացնել և պէտք է դիմել
բժշկի օգնութեան։ Ցերեկուալ լոյսը մանուկի առողջ
աչքին վնասակար չէ, եթէ արևը շատ պալծառ չէ լու-
սաւորում պատուհանից։

Մանկանոցում պէտք է լրութիւն տիրէ, որովհե-
տև նորածիններին կեանքի առաջին ամիսներում առատ
քուն է հարկաւոր։

Ծծկեր մանուկների աղաղակը լաճախ միայն կեան-
քի արթնանալու նշան է լինում, դա իւր լեզուն է, ո-
րով մանուկը հաղորդում է իւր պահանջները։ Այն ե-
րեխան, որ շատ է աղաղակում, երբեմն սոված է լի-
նում և հանգստանում է, հէնց որ աւելացնում են սո-
վորական սնունդի չափը, կամ փոխում են նորա բա-
ղադրութիւնը։ բայց շատ անգամ էլ ալդ աղաղակի պատ-
ճառը թաց բարուրն է լինում կամ անյարմար փաթը-
թած շորի ճնշումը։ Հազիւ է պատահում, որ ալդ ա-
ղաղակի պատճառը հիւանդութիւնը լինի, ընդհակառակն
ուժեղ ձախնը սխալ չէ, որ աւելի առողջութեան նշան
է համարւում։

Ատամ հանելը. խօսել սկսելը, կանգնել եւ մանգալ։

Կեանքի առաջին տարուալ երկրորդ կէսում ատամ-
ների դուրս գալը զանազան անյարմարութիւններ է
պատճառում։ Լնգերքի ափերը ուռչում են և ցաւում,
լորձունքը հոսում է առատ, երեխանները շուտ շուտ
մատը բերանն են գնում, քնում են անհանգիստ, լաց-
կան են դառնում և տրամադրութիւնը խանգստրում է։
Երբեմն տաքութեան մի փոքր աւելանալն էլ լինում է
ատամների դուրս գալու հետևանքը։ Բայց այս հասա-
կում նոյնպէս լաճախ պատահող ուրիշ հիւանդութիւն-
ներ, ինչպէս՝ մորթու վերայ դուրս տուած պզուկները,
ցնցումը, հազը, բարձր տաքութիւնը, սովորաբար ոչ
մի կապ չունին ատամնահանութեան հետ, շատ շատ
այդ երևոլթները ծանը կերպարանք են ստանում միայն,
եթէ ատամների դուրս գալու հետ միաժամանակ են
պատահում։ Այս հասակում պատահող բոլոր հիւանդու-
թիւնները ատամնահանութեան հետևանք համարելու
սովորութիւնը երբեմն պատժւում է երեխաների մա-

հով, մինչդեռ կարելի էր օգնութիւն հասցնել: Առաջին տարուալ վերջերին մանուկներն սկսում են թոթովիլ իրանց առաջին խօսքերը. լեզուի զարդացումը մեծ մասամբ կատարում է առանց դժուարութեան. և լեզուի կապը, որ լեզուն միացնում է բերանի լատակի հետ, ազդեցութիւն չունի այդ զարդացման վերալ նթէ լեզուի կապը կարճ է, խօսելիս հետզհետէ ձգւում է. կապը կտրելը, որ այնքան սիրում է ժողովուրդը, աւելորդ է կարող է բորբոքուելու և թարախակալելու պատճառ դառնալ:

Այս միևնույն հասակում երեխաները պահանջ են զգում կանգնելու և մանգալու. նոցա հարկաւոր է ուշադիր հսկողութիւն, որ վալր ընկնելու դէպքում չը վնասուին. մի քանի դէպքերում ոսկրների փափկութեան պատճառով, որ հետեւանք է լինում Անգլիական կոչուած հիւանդութեան (Rachitis) մանգալու ձգտումը շատ աւելի ուշ է երեսում. այդպիսի երեխաներին վաղ մանգալ ստիպելը միտք չունի, նոցա օգուտ է որ երկար ժամանակ պարկած մնան, որովհետև թոլլ ոսկրները մանգալիս ծուռում են մարմնի ծանրութեան տակ: Ուստի և աւելի լաւ է, որ Անգլիական հիւանդութիւն ունեցող երեխաները սկսեն մանգալ միալն երկրորդ կամ երրորդ տարուալ ընթացքում:

Մտցի բացուելը, մանկական պարտեզներ:

Մասածելու ընդունակութեան զարթնելը, հասկացողութեան աւելանալը և կամքի զարդացումը պահանջում են նորա մարմնի խնամատարութեան հետ միասին և հոգու կրթութիւն: Քանի որ աւելի ուշադրութիւն է դարձնուում երեխալի ընական զարդացման վերալ և իւչքան քիչ է մանկական միտքը ծանրաթեռնուում այնպիսի տեսարաններով, որոնց նա կարիք չէ զգում, այնքան ուշ, բայց առողջ է աճում նորա միտքը:

Այս ծնողները, որոնք թէ իրանց արհեստի, թէ հիւանդութեան և կամ ուրիշ պատճառներով չեն կարողանում իրանց բոլոր ժամանակը և ոյժը երեխաների դաստիարակութեան նուիրել, դոցա ցանկալի օգնութիւն են հասցնում այսպէս անուանուած մանկական պար-

տէզները։ Այստեղ երեխաներն զբաղւում են ընդհանուր խաղերով և հետը միասին ստանում են իրանց առաջին օդտակար խթաները։ Մանկական պարտէզներն էլ տեղի դիրքի և սարք ու կարգի կողմից նոյնանման առողջապահական պահանջներն ունին, ինչ որ և դպրոցները։

Ուսման ժամանակը. հաստատութիւնների, ուսուցիչների, դաստիարակների եւ ծնողների պարտաւորութիւնները։

Ուսումնարան մտնելիս երեխալի կեանքի եղանակի մէջ նշանաւոր փոփոխութիւն է կատարւում. օրուայ մի մասը նա պէտք է նուիրէ նշանակած պարապմունքներին, պէտք է իւր մտաւոր և մարմնական ոյժերը լարէ. և երեխան սովորում է պարտաւորութեան նշանակութիւնը։

Արդարութիւնը-պահանջում է, որ այն տէրութիւնը, ուր ուսումը պարտագիր է արած, հոգալ, որ երեխաները հասարակութեան պահանջած պարտքերը կատարելիս՝ իրենց առողջութիւնը կարեւոյն չափ քիչ վըտանգի ենթարկուի։ Ուսումնարանների ղեկավարները պարտաւոր են հետևել, որ կառավարութեան՝ այս նպատակով սահմանած կանոնների համեմատ ոչ ալդ դպրոցների կազմակերպութիւնը, ոչ էլ ուսման եղանակը ըսկնասէ աշակերտների առողջութեան. բայց ուսուցիչները պէտք է հսկեն իրանց հաւատացած ամեն մի երեխալի վերալ և ուշադիր լինին իւրաքանչիւր երեխալի մտաւոր և մարմնական ընդունակութեան առանձնայտիկութիւններին։ Սակայն սորանով ծնողներն ու տան դաստիարակները բոլորովին չեն ազատւում իրանց պարտականութիւնից գէպի երեխաները։

Դիտելով երեխաների ազատ ժամերի վարք ու բարքը, նոցա ախորժակը և քունը, մենք ալդպիսով աւելի հեշտութեամբ ենք իմանում նոցա առողջութեան խանգարմունքը և զարգացման անկանոնութիւնները, քան ուսման ժամանակի Յաճախ և ուսուցչի կամ դպրոցի ղեկավարների հետ տեսնուելն էլ երեխալին սպառնացող վտանգը ժամանակին իմանալու և հեռացնելու պատճու է լինում։ Համապատասխան ընտանեկան ինամքը, մարմնական շարժողութիւնները, զբուսանքները, պատա-

հած մարմնական որևէ թերութեան նպատակալարմար բժշկութիւնը ամրացնում են ոլֆերը և ընդունակ են դարձնում ուսման պահանջներին դիմանալու:

Դպրոցական տոնն եւ դաստուն:

Դպրոցական տան վերաբերութեամբ գլխաւորապէս պէտք է աչքի առաջ ունենալ այն լատկութիւնները, ինչ որ և բնակարանների համար. բայց դասատները պէտք է համապատասխաննեն նաև ուրիշ՝ փորձերի վերալ հիմնուած պահանջներին: Նոցա երկայնութիւնը, լայնութիւնը և բարձրութիւնը որոշ չափեց աւելի չը պէտք է լինի, որովհետև գրատախտակի վերալ գրածը պէտք է կարդալ առանց աչքերը լարելու, և վերջին նստարանից. լուսամտի հանդէպի պատերի մօտ գտնուող նստարանները բաւական լուս պիտի ստանան և դաստան բարձրութիւնը ձալնի վերալ չպէտք է ազդէ: Ընդհանրապէս այն սենեակը, որ 10 մետրից երկար, 7 մետրից լայն և 4 մետրից բարձր չէ, համապատասխանում է այդ պահանջներին և ալդպիսի մի բնակարան, որի օդի ծաւալը 280 խորանարդ մետր է ունենում, կարող է զետեղել 50—55 երեխալ: Եթէ և իւրաքանչկարող է զետեղել աշխատավոր համեմատարար չիւր աշակերտին ընկնող տեղի բաժինը համեմատարար փոքր է, պէտք է աչքի առաջ ունենալ, որ ալդպիսի սենեակները անընդհատ կերպով գործ են դրւում միայն կարճ ժամանակ. բայց դաստունը ալդքան շատ լցնելն էլ թուլ է տրւում միայն այն պայմանով, որ դասամիջոցներին լուսամուտները և դռները բանալով հոգացուի օդը բոլորովին նորոգել և որ համապատասխան լարմարութիւնները թուլ տան դասի ժամանակն էլ շարունակ օդը մաքրել:

Դպրոցական տան վառարանները պէտք է լարմարացնուին կլիմալի, տեղական ուրիշ հանգամանքներին և շինութեան մեծութեան. աւելի մեծ հաստատութիւնների համար առաւելութիւն է տրւում այսպէս կոչուած կենդրոնական վառարաններին» (*Sammelheizung*), որոնք կապակցուած են վինտելիացիալ հետ. փորձը ցոյց է տալիս, որ դաստուն մէջ բաւական է մինչև 18. աստ. (Յելսի) տաքութիւն աշակերտների համար:

Պատերը, յատակը և դասատան բոլոր կարասիքը պէտք է կարելուն չափ հարթ լինին, ոչ մի տեղ անկիւններ, փորուածներ և ճեղքեր չպէտք է ունենան, որոնք թող և կեղտ են ընդունում: Այն ժամանակ միշտ խնամքով մաքրելով հեշտ կարելի է աղտոտութեան դիզուելու առաջն առնել:

Յաճախ մանկական հասակից արդէն երեխաները ընտելանում են շուտ շուտ թքելու վատ սովորութեան: Առողջ երեխաներին քաղաքավարութեան և մաքրութեան շնորհիւ պէտք է ստիպել չիւրացնել ալդ վատ սովորոլթը. միայն հիւանդութեան դէպքում չպէտք է արգելել նոցա ալդ: Հազոր աշակերտներին պէտք է ստիպել թէ գպրոցում և թէ գուրսը թքել իւրեանց արտաթորութիւնները ոչ թէ սենեակների յատակի, ալլ ալդ նպատակի համար գրած թքամանի մէջ, որովհետեւ յատակի վերալ թքելը այն հետևանքն է ունենում, որ թողի հետ խառնւում են հիւանդութեան սերմերը, որոց ներշնչելը բարձրացած թողի հետ կարող է կորըստաբեր լինել միւս երեխաների համար:

Դասատան լոյսի յարաբերութենը կարմատեսութեան նագման իետ:

Դասատան լոյսը մեծ առողջապահական նշանակութիւն ունի, որովհետեւ վատ լոյսը նպաստում է կարճատեսութեան և ողնաշարի ծոռւելուն, որպիսի հիւանդութեան, ինչպէս յայտնի է փորձից, ենթակայ են աշակերտները: Թէպէտ յաճախ ալդ երկու հիւանդութեան պատճառը լինում է նոյն իսկ երեխաների բնական հիւանդու կազմուածքը, բայց աչքերի լարելը վատ լուսաւորուած սենեակներում կարդալիս, գրելիս և գծագրելիս նպաստում է կարճատեսութեան, ինչպէս և ողնաշարի ծոռւելը մատաղ սերնդի մէջ այն ժամանակ է հեշտ առաջ գալիս, երբ նոքա, ջանալով աչքերը մօտեցնել վատ լուսաւորուած տետրակին կամ գրքին՝ գլուխը երկար ժամանակ թեքած են պահում դէպի սեղանը: Ուստի և ոչ տները, ոչ պատերը և ոչ ծառերը չպէտք է արգելք լինին լուսի թափանցելուն դասատներում: Բաւականաշափ լոյս մտնելու համար պատուհանները

պէտք է լինին լայն և բարձր և նոցա լուսանցքը մօ-
տաւորապէս պէտք է համապատասխանէ յատակի ^{1/5}
մասին, Բաց մոխրագոյն կամ կապտագոյն ներկած պա-
տերը նպաստում են լուսի տարածման և նոցա վերալ
ընկնող լոյսը աչք չէ ծակում: Ամենից լաւ է, որ ա-
շակերտների գրասեղանները լուսաւորուած լինին ձախ
կողմից կամ վերևից. Եթէ լոյսը ընկնում է առջևից՝
աշակերտի աչքը ծակում է. Եթէ ետևից է ընկնում
մանկան ստուերը մթնացնում է նորա առաջ սեղանի
երեսը: Եթէ լոյսը աջ կողմից է ընկնում, գրելիս խան-
գարում է նոցա ձեռքերի կամ գրիչների ստուերը, ուս-
տի և ստիպւում են թեք նստել: Եթէ ձմեռուալ կարճ
և մութ օրերին ցերեկուալ լոյսը չէ բաւականանում,
պէտք է արհեստական լոյսի օգնութեան դիմել, աչքի
առաջ ունենալով միևնուն հիմունքները, որոնք ընդու-
նուած են առհասարակ բնակարանները լաւ լուսաւորե-
լու համար:

Գրասեղաններ. ողնաշարի ծռուելը:

Բայց լուսաւորութիւնից գրասեղանների ձևն էլ
կարող է ողնաշարի ծռուելուն թէ նպաստել և թէ ա-
ռաջն առնել: Որպէս զի աշակերտները մարմինը ծռուը
պահել չափորեն, ամենից հեշտ միջոցն ալն է, որ նո-
քա գրելու կանոնաւոր գրութիւնը ընդունեն և պա-
հեն որքան հնար է առանց մկանները լարելու:
Բարձր նստարանը թուլ չէ տալիս ուղղանկիւն ծա-
լած ծնկներով ոտները գետնին դնել: կամ նեղ նըս-
տարանը, որի վերալտեղ չէ լինում ամբողջ ազդը հա-
մար, լոգնեցնում է ոտների մկանները: Եթէ սեղանը կա-
րեոր չափով բարձր չէ նստարանից, աշակերտը ստիպ-
ուած է լինում անլարմար կերպով գլուխը խոնարհեց-
նել: Նատ բարձր սեղանը դժուարացնում է բազկի դը-
նելը նորա վերալ գրելու ժամանակ և պատճառ է լինում
աջ ուսի բարձրացնելուն, որով առաջ է գալիս բունի վե-
րին մասի մի ծուռը գրութիւն և միևնուն ժամանակ
աչքերը մօտենում են սեղանի մակերեսովթին աւելի քան
թէ օգտակար է: Սեղանի և նստարանի հանդէպի մեծ
հեռաւորութիւնը պատճառ է լինում բունի թեքուե-

լուն, որից մէջքի մկանները ձգւում են և շնչառութիւնը արգելում:

Վերջերումս դպրոցական վարչութիւնները աշխատում են ինչպէս դասարանական լուսաւորութիւնը, այնպէս էլ գրասեղանները, ինչքան որ թոյլ է տալիս մի դասատան մէջ հաւաքուած աշակերտների մարմնի զանագան մեծութիւնը, աւելի և աւելի լարմարացնել առողջական պահանջներին, Բայց և այնպէս կան մանուկներ, որոնք լաւ լուսաւորուած սենեակումն էլ և նպատակայարմար նստարանների վերալ էլ լաւ չեն պահում իրանց մարմինը: Սա մեծ մասամբ միայն վատ սովորութեան հետևանք է, որից պէտքէ աշխատել հեռացնել աշակերտներին: Բացառիկ դէպքերում մարմնի վատ պահելը կարող է առաջ եկած լինել և հիւանդոտ դրութիւնից, որ եթէ ժամանակին չբժշկեն, կարող է վտանգաւոր դառնալ: Այդպիսի դէպքերում երեխաների ծընողներն ու դաստիարակները լաւ կանեն, եթէ բժշկի խորհրդին դիմեն:

Սակայն ծուար նստելու վտանգաւոր ազդեցութիւնը ոչ միայն կարճատեսութեան և ողնաշարի ծուելու մէջ է երեւում, այլ սորանով երբեմն խանգարւում է և արեան շրջանը, այնպէս որ առաջանում է արեան շրջանի տնկանոնութիւն գլխի ուղեղի մէջ, գլխացաւ և քթից արեանհոսութիւն:

Աշակերտների ծանրաբեռնութեան խնդիրը. դպրոց. աշխատանքի աննպատակայարմար բաժանումը:

Այս և նման առողջութեան խանգարումները վերջերս յաճախ համարում են իբրև հետևանք ծանրաբեռնութեան և այս հիման վերալ մեղադրում են դպրոցներին, որ նոքա ծանրաբեռնում են իրանց հաւատացած մանուկներին: Բայց այս մեղադրանքը առհասարակ անհիմն է և յաճախ մեծացրած. աշակերտները պէտք է մի որոշ չափով լարեն իրանց ոյժերը, որովհետև դպրոցների վերալ պարտք է դրած ոչ թէ միայն ուսումն տալ պատանիներին, այլ և մեծացնել աշխատասէլ. և պարտանաչքաղաքացիներ: ՚Ի միջի ալլոց անհրաժեշտ են և տնալին գասերը, որովհետև աշակերտը միայն այն ժամանակ է սովորում անկախ մտածել, երբ նա ստի-

պուած է աշխատել միայնակ։ Ուսման նախագիծը գերմանական դպրոցներում ամեն տեղ լարմարեցրած է մանկական և պատանեկական հասակի ոյժին և հաստատութիւնները ուշադիր կերպով հսկում են, որ ամեն մի ուսուցիչ չկարողանալ իրանց ոյժից վեր պարապեցնել իրանց աշակերտներին։ Եթէ, չնայելով սորան, մի քանի աշակերտներ մտաւորապէս լոգնելու նշաններ են ցոլց տալիս, այն է վատարամադրուած և գլուխուած դրութեան մէջ են լինում կամ մարմնի աճումը լիտ է մնում, կամ հիւանդութեան են ենթարկում, ալդ դէպքերում մեծագոյն մասամբ լանցաւոր են լինում ուրիշ հանգամանքներ, ամենից յաճախ պարապմունքների աննպատակ բաժանումը։ Եթէ տանը տուած դասերն սկսում են պատրաստել ուսումնարան գնալուց միայն փոքր ինչ առաջ, եթէ պարապմունքից ազատ ցերեկուայ ժամերը նուիրում են միայն զուարճութիւններին և խաղերին, եթէ գիշերուաէ ժամերն էլ պէտք է զործ գնել դասերը պատրաստելու համար, դորանով քունը կարճանում է, որից նոյն իսկ երեխաներն ու պատանիները չեն կարող զըկուել, առանց վնաս կրելու, և ալդպիսով աշակերտները ցերեկը չեն կարող հարկաւոր թարմութեամբ և ուշադրութեամբ հետեւ դասերին։ Միւնոյն ժամանակ տանու դասերը, որոնք ալդպիսի դէպքերում հասկանալի է որ շտապով են պատրաստում, չեն կարող գոհացնել ուսուցիչների պահանջները, աշակերտների լիշողութիւնն ու ընդունակութիւնը պահանջած առարկան բաւական հիմնաւոր չեն ըմբռնում, և արդէն ոյժերը պէտք է կարողութիւնից աւելի լարեն, եթէ ուզում են ցանկալի նպատակին հասնել, այն է բարձր դասատուն անցնել կամ բաւարար թուանշաններ ստանալ։

Կեանցի եղանակը դպրոցական հասակում։

Վերոլիշեալ հանգամանքներն աւելի ծանրանում են, եթէ աշակերտները միւնոյն ժամանակ աննպատակալարմար կեանք են վարում։ Մտքի զարգացման հետմիասին պէտք է ընթանայ և մարմնի հոգատարութիւնը։ Հանգստութեան ժամերը, մանաւանդ արձակուրդ-

ները, պէտք է նուիրուին զբօսանքներին, մարմնամարդական խաղերին, լողանալուն, սառուցի վերալ սահելուն և ալլն. և ոչ թէ սենեկում անցկացնեն։ Աճող սերնդի սնունդը պէտք է պարզ լինի. ոգելից խմիչքներ գործածելու և ծխելու վաղաժամ սովորութիւնը քայլքայում է առողջութիւնը և պէտք է ուշադիր կերպով զգուշացնել այդ սովորութիւններից։ Նատ վատ է ազդում և գիշերն երկար ժամանակ արթուն մնալը, ուստի տշկերտների մասնակցութիւնը չափահասների զուարձութիւններին, որոնք յաճախ խլում են գիշերուալ ուշ ժամերը, խորհուրդ չենք տալիս։ Դոցա առհասարակ բոլորովին չափահարք թուլ տալ, որ մասնակցեն աղմկալից տօնախմբութիւններին, մանկական ճոխ հանդէսներ սարքեն, թատրոն կամ նուազահանդէս գնան, կամ միայն բացառիկ գէպքերում։ Որովհետև այս տեսակ բոլոր զուարձութիւնները ըստ մեծի մասին այն հետևանք քըն են ունենում, որ աշակերտների միտքը հեռացնում են դասերից և իրանց պարտաւորութիւններից։ Նոյնը պէտք է տսել և անյարմար գրքերի մասին, որոնց մէջ, օրինակ, նկարագրուած են զանազան գրգռող յանցանքների պատմութիւններ, կամ մի քանի վէպերի մասին, որոնց ընթերցումը տակաւին տհաս մտքի երևակարութիւնը չափազանց գրգռում է։ Պատահել է, որ վատ գրքերի շնորհիւ այն աստիճան խանգարուել է բարոյականութեան և պատուի հասկացողութիւնը, որ հոգեալէս վատ տրամադրուած աշակերտները որևէ է արտակարգ առիթ պատահած դէպքում անձնասպանութիւնից չեն վախեցել։ Միւս կողմից լաւ գրքերով պարապելը, որոնցով կարելի է զարգանալ և որոնք կարող են զարթեցնել նորա մէջ ազնւութեան և գեղեցիկ օճի ու մտքերի հասկացողութիւն, օգտակար է և այն նպատակի համար պէտք է գործ դնել օրուայ հանգստութեան այն ժամերը, երբ վատ եղանակը թուլ չէ տալիս թարմ օդի մէջ լինել։ Երաժշտութիւն և ուրիշ արուեստներ պէտք է սովորցնել միայն դորա համար առանձին ձերք ունեցող մանուկներին և ուշագրութիւն գարձնել, որ այս կողմանակի պարապմունքները չխանգարեն դպրոցական պար-

տաւորութիւնների կատարման, որպէս զի չափազանց
լոգնելու առաջն առնուի և հանգստութեան ժամերը
շատ չափասեն:

Մարմնի աճումը եւ պահպանութիւնը դպրոցում. մարմնա-
մարզութեան դասերը:

Տղալոց և աղջկանց մարմնական զարգացումը դըպ-
րոցումն էլ անտես չպէտք է անել. ուսուցիչները պէտք
է հսկեն իրանց աշակերտների առողջական վիճակի վե-
րալ, հարկաւոր հրահանգներ և խրատներ տան նոցա և
ծնողների ուշադրութիւնը առանձին նկատողութիւններ
գրելով լիշտակարաններում կամ անձնական բացատ-
ըութիւններով ժամանակին հրաւիրեն իրանց որդւոց ա-
ռողջութեան փոփոխութիւնների վերալ Տարափոխիկ հի-
ւանդութիւն ունեցող աշակերտները պէտք է ջոկուին
միւսներից կամ մինչև վտանգն անցնելը ուսումնարան
չաճախեն թէ իրանք և թէ ուսումնարան յաճախող
իրանց եղբայրներն ու քոլբերը: Տարափոխիկ հիւանդու-
թեան աւելի տարածուած ժամանակ փակւում են կամ
միայն այն դասատները, ուր ալդ հիւանդութեամբ աշա-
կերտներ կան և կամ ամբողջ դպրոցը ժամանակաւոր
կերպով:

Մարմնամազութեամբ պարապելը աւելացնում է
մարմնի և նրա անդամների ոլժը և դիւրաշարժութիւ-
նը, բայց միւսնոյն ժամանակ պէտք է ուշադրութիւն
դարձնել պատահած հիւանդութիւնների վերայ. երկիւլ
կրող ծնողներն անմիտ են վարւում, երբ առանց ստի-
պողական պատճառի զրկում են իրանց որդւոց մարմնի
այս օգտակար զարգացումից: Մարմնամարզութեան դա-
սերի ժամանակ պատահածամբ ստացած վիրաւորութիւն-
ները գրեթէ միշտ թեթև տեսակից են լինում և չեն
կարող պատճառ լինել ալդ երկիւլի: Թերևս ալդ տե-
սակ դժբաղդ դէպքերը մարմնամարզութեան դասերից
դուրս աւելի յաճախ կարող էին պատահել, որովհետև
լայտնի է, որ մանաւանդ տղալ երեխաններն զգում են
վազվազելուպահանջը և նոքա, եթէ մարմնամարզական խա-
ղերը չլինէին, այժմեանից աւելի կաշխատէին վալրենի խա-
ղերի մէջ բաւականութիւն ստանալ, առանց հսկողութեան:

Աշակերտների ընդունակութիւնը:

Եթէ երեխաները, չնայելով նկատելի ձգտման,
երկար ժամանակ չեն կարողանում դպրոցում իրանց
տուած դասերին լաղթել և երկիւղ կալ, որ նոցա ա-
ռողջութիւնը լոգնածութիւնից վնասում է, խնդիր է
ծագում ծնողների և դաստիարակների համար, թէ մի
գուցէ ընտրած ուսման տեսակը համապատասխան չէ
նոցա ընդունակութեան: Երբեմն կարելի էր միայն գըպ-
ըոցը փոխելով բաւականանալ, մանաւանդ թէ որ հնար
էր մեծ զպրոցի փոխարէն քիչ աշակերտ ունեցող մի
ուսումնարան ընտրելով, ուր ուսուցիչները կարող են
ամեն մի աշակերտին աւելի ժամանակ նուիրել. բայց
եթէ այս միջոցն էլ չէ օգնում և եթէ անկասկած է,
որ այս անյաջողութեան պատճառը ծուլութիւնը կամ
անհոգութիւնը չէ, արդէն անմիջապէս փոխելու է ուս-
ման ուղղութիւնը: Կան աշակերտներ, որոնք լեզուներ
ուսանելիս անյաղթելի դժուարութեան են հանդիպում,
բայց հեշտութեամբ ըմբռնում են մատեմատիքական
գիտութեան օրէնքները և շատերին էլ մարմնի ընդու-
նակութիւնը և դիտելու ձերքը կեանքի լաւագոյն վի-
ճակ է տալիս. մինչդեռ գիտնական ասպարէզներում
նոքա միայն երկրորդական դեր կարող են կատարել:

Ծնողներն իրանց զաւակների ուսման ուղղութիւնը
փոխելիս լաւ կլինէր, որ խորհրդակցէին ուսուցիչների
և բժիշկների հետ: Այստեղ երեխաների կամքը վճռ
տալ չէ կարող, որովհետև պատանիները հեշտութեամբ
են խարւում իրանց ցանկութիւնների մէջ և լաճախ,
երբ նոքա չափահաս են դառնում, զղջում են որ կա-
տարուել է իրանց ցանկութիւնը, որով կեանքի ասպա-
րէզի մի մասը փակուել է նոցա առաջ:

Յատկապէս աղջկանց դաստիարակութեան մասին:

Աղջկանց մեծացնելիս աչքի առաջ պէտք է ունե-
նալ մի քանի լատկութիւններ. աղջիկը տղալից աւելի
մեծ խնամք է պահանջում և նոցա աւելի պէտք է
խնալել, որովհետև քնքոյշ մարմնի յոգնածութիւնից
լաճախ առաջ են գալիս արեան պակասութիւն, զգալիւ-
նութիւն, որ կոչւում է զղալնութիւն՝ և ուրիշ հիւան-

դութիւններ։ Այս պատճառով օրիորդական ուսումնաբանները առանձնապես պէտք է խուսափեն իրանց հաւատացած երեխաներին լոգնեցնելուց, մալրերը իրանց դուստրներին քնքշութեամբ պիտի պահեն և հրահանդեն։ ոլժերը լարող թէ զիտնական և թէ ուրիշ այնպիսի ասպարէզի համար պատրաստելիս, որոնց դռները բաց են և կանանց համար, պէտք է ընտրել միայն այն տեսակ աղջկերք, որոնց մտաւոր ընդունակութիւնը և մարմնի առողջ կազմուածքը երաշխաւորում են դորա համար։

Ա. ՊԱՏՄՐԱԳԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ՀԾՏ Պ. Մ. ԵԿՄԱԼԵԱՆՑԻ

Կովկասի լրագրաց, որպէս և Զեր ընտիր հանդիսի՝ Արւմայիշն մէջ շատ կարևոր ինսդիր մը յառաջ եկաւ, որ կվերաբերի պ. Մ. Եկմալեանցին ներդաշնակած Ա. Պատարագի արարողութեան տպագրութեան։ Այս ինսդիրը հակառակ կարծիք յառաջ բերաւ՝ արդեօք ինչպիսի ձայնանիշներով պէտք է տպագրուի արդի՝ Հայկական, թէ Եւրոպական։

Այլ անգամին թողլով աս հարցերուն վերաբերեալ բացարութիւնները, գրութեամբ կուզեմ շեշտել ինչդիր մը, որ, ըստ մեր կարծեաց, նախապատիւ է, ընտրութիւն և նուագ տպագրելի Ա. Պատարագի արարողութեան։

Որչափ գիտենք, Հայոց Ա. Պատարագի երգեցմունքը տպագրուած է երկցս միայն, երկուքը՝ ի Ա. Էջմիածին արդի հայկական և մին ի Վենետիկ՝ Խւրոպական ձայնանիշնով։ Ասոնց բովանդակութեան գնահատութիւնը մէկդի թողունք, բայց եթէ քովէ քով դնենք, բաւականաշափ զգալի զանազանութիւն մը կնշմարուի, զի երկուքն ևս որիշ երգեցմունք պարունակելէ զատ, չե՞ն յարմարիր նոյնպէս պ. Այլ տեղեաց նուազներուն, աս մեր անձնական փորձէն և գիտենք։ Քանի մը տարի առաջ պտղաւ մը գործեցինք Կ. Պոլսէն ի Կովկաս և անտի ի Պարսկաստան և ամեն տեղ